

---

## **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵՋՈՆԱՅԻՆԾՈՒԹՅԱՄԲ**

### **ՎՈԼՈՂՅԱ ՄԱՍԱՅԱՆ**

Գյուղական բնակչության աշխատածախսերի ավանդականորեն ձևավորված եղանակը գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման հետագա խորացումը պայմանավորող պարզ գործոն չէ: Աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխումն ու աշխատածախսերի ռացիոնալ օգտագործումը, իրենց էվոլյուցիային բնորոշ առանձնահատկություններով հանդերձ, պատճականորեն հաջորդել են գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման հետագա խորացման փոփոխվող գործընթացին:

Գյուղատնտեսական արտադրությունը կատարելագործվում է մասնագիտացման այնպիսի արտադրական ուղղություններում, որոնք համապատասխանում են ագրարային հատվածի աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և պարենանթերքների նկատմամբ բնակչության աճող պահանջնունների բավարարմանը: Օրինակ, մինչև 1960-ական թվականները Արարատյան դաշտի նախալեռնային չոր լեռնատափառանային լանդշաֆտների ենթագոտին շատ քիչ էր բնակեցված և առավելապես արածովի արոտային անասնաբուծության մասնագիտացված տարածք էր: Դետագայում այդ ենթագոտու հողերը ջրովի դարձնելու ուղղությամբ կատարված հողաբարելավման զգալի աշխատանքների շնորհիվ մեծացավ բնակչության թիվը, քանի որ արիեստական ռոռոգման պայմաններում դրանք առավել նպաստավոր դարձան արդյունավետ և աշխատատար ենթացույցի արտադրության զարգացման համար (պտղաբուծություն, խաղողագործություն, բանջարաբուծություն, տեխնիկական մշակաբույսեր, կաթնատու տավարաբուծություն, թռչնաբուծություն և այլն):

ՀՀ ագրարային հատվածը զարգացման շուկայական բարեփոխումների փուլում, գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացմանը գործընթաց, անբողջովին փոփոխվեց տարբեր ուղղաձիգ լանդշաֆտային գոտիներում գյուղական բնակչության տեղաբաշխման և աշխատածախսերը արդյունավետ իրականացնելու առումներով: Ընդ որում, ըստ ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների՝ գյուղական բնակչության աշխատածախսերի տարեկան բաշխման փոփոխություններն անհրաժեշտ են ագրոկլինայական ռեսուրսները ռացիոնալ օգտագործելու, գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացումը խորացնելու, ինչպես նաև ագրարային հատվածի աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար: Սակայն հանրապետության գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման էվոլյուցիոն փոփոխու-

թյուններն ամենակին էլ տեղի չեն ունենում նույնքան արագ, որքան պայմանները<sup>1</sup>: Ուստի ագրարային հատվածի զարգացման յուրաքանչյուր առանձին փուլում, գյուղատնտեսական աշխատանքների սեզոնայնությամբ պայմանավորված, պատմականորեն ծևավորված գյուղական բնակչության տեղաբաշխումը և աշխատածախսերի օգտագործումը էական ազդեցություն են ունենում ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների ու գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման վրա: Այդ ազդեցությունը համարում կարելի է սահմանել այսպես. ուղղաձիգ լանդշաֆտային տվյալ գոտու բնակչության թվաքանակը կարող է տարբեր փոխադարձ կապերի մեջ լինել այն թվաքանակի հետ, որն անհրաժեշտ է տնտեսության որևէ արտադրական ուղղության գործառության համար՝ հաճապետության ամբողջ ագրարային հատվածի մասնագիտացման շահերից ելնելով: Այդ հնարավոր փոխադարձ կապերը կարելի է հանգեցնել հետևյալ տարբերակներին:

1. Եթե որևէ ուղղաձիգ լանդշաֆտային կամ գյուղատնտեսական գոտում գյուղական բնակչությունն ավելի մեծաթիվ է սահմանվածից, ապա այդ դեպքում սովորաբար նկատվում է ագրարային հատվածի մասնագիտացման լավագույն արտադրական ուղղություններից շեղում դեպի ավելի աշխատատար և ինտենսիվ ենթաճյուղեր (օրինակ՝ ՀՀ հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու լեռնաանտառային լանդշաֆտներում՝ ծխախոտագործության և խոզաբուծության, Շիրակի և Սևանի ավազանի գյուղատնտեսական գոտիներում՝ ճակնդեղագործության ու յուղատու տեխնիկական մշակաբույսերի և թռչնաբուծության գծով մասնագիտացման խորացում):

2. Եթե գյուղական բնակչության թիվն ավելի փոքր է սահմանվածից, և այդ պակասը չի փոխադարձվում գյուղատնտեսական աշխատանքների լարված փուլում այլ ուղղաձիգ լանդշաֆտային գոտիներից կամ տարածաշրջաններից լրացուցիչ աշխատուժի ներգրավմամբ: Այդ դեպքում սովորաբար նկատվում է ագրարային հատվածի մասնագիտացման արտադրական ուղղություններից շեղում դեպի ոչ ինտենսիվ և ցածր աշխատատար ենթաճյուղեր: Այդպիսի իրավիճակ կարելի է տեսնել ՀՀ հյուսիսարևելյան, Զանգեզուրի, Վայքի և Լոռի-Փամբակի գյուղատնտեսական գոտիների գետահովիտային առանձին տեղամասերում և այլուր:

3. Եթե գյուղական բնակչության թվաքանակը համապատասխանում է տվյալ ենթաճյուղի աշխատածախսերի համար սահմանված մեծությանը, ապա այդ դեպքում չեն նկատվում տվյալ գործոնից շեղվող գործողություններ:

Սկզբունքորեն հնարավոր են ագրարային հատվածի գոտիական և ներճյուղային մասնագիտացման վրա գյուղական բնակչության տարածքային տեղաբաշխման և աշխատածախսերի օգտագործման այլ ազդեցություններ. օգտագործվող աշխատուժի թվաքանակը կարող է զգալիորեն կախված լինել նաև գյուղատնտեսական աշխատանքների լարված

<sup>1</sup> Տե՛ս Խօջաբեկյան Բ. Դемография и проблемы занятости с начала XIX века до середины XIX века. Еր., 2006, էջ 433-434:

փուլում ուրիշ լանդշաֆտային և գյուղատնտեսական գոտիներից լրացուցիչ աշխատուժի ներգրավման չափերից: Բայց դրանից, առանձին ուղղաձիգ լանդշաֆտային և գյուղատնտեսական գոտիներ ոչ միատեսակ պայմաններում են գտնվում հարևան որևէ վարչական տարածքային միավորի սահմաններից լրացուցիչ աշխատուժի ներգրավման հնարավորությունների առումով:

Տարածաշրջանային տարբերությունների տեսանկյունից գյուղատնտեսական արտադրությունը որակյալ մասնագիտական աշխատուժով ապահովելու գործընթացների մեջ պետք է ներառել նաև ոչ միատեսակ պայմաններում ագրարային հատվածում զբաղված գյուղական բնակչության պահանջնունքների բավարարմանը միտված՝ գյուղացիական տնտեսություններից ստացված եկամուտների և աշխատանքի վարձատրության անհրաժեշտ պայմանների տարբերությունը: Ոչ միատեսակ պայմաններ ստեղծվում են նախ՝ սպառմանն անհրաժեշտ պարենամբերքը տեղ հասցեին (կամ տեղում արտադրելիս) և որոշակի ծառայություններ մատուցելիս, երբ սահմանվում են ոչ միատեսակ գներ. այլ խոսքով՝ բնակչության պահանջնունքների բավարարման նպատակով կատարվում են ոչ միատեսակ ծախսեր<sup>2</sup>: Երկրորդ, գյուղական տարածքում բնակության և աշխատանքի կազմակերպման ոչ միատեսակ սոցիալ-տնտեսական ու կուլտուրկենցաղային պայմանների պատճառով. բարեկեցության պակասը և առհասարակ աշխատանքի ու հանգստի վատ պայմանները (մասնավորապես՝ աշխատանքի պակաս գրավչությունը և անգեղասիրական լինելը՝ կապված եղանակային պայմանների, տեղումների, էկոհամակարգի աղտոտվածության, արեգակնային ճառագայթնան և այլնի հետ) պետք է փոխհատուցվեն եկամուտներով ու աշխատավարձի բարձրացմանը, ինչպես նաև՝ պետական աջակցությանը, որը նախատեսում է ընդլայնված վերարտադրություն, սուբսիդավորում, հարկային ու վարկային խթաններ և այլն:

Աշխատանքը ագրարային հատվածում ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք արտացոլում են ճյուղի մասնագիտացման գործընթացում աշխատանքային ռեսուրսների օգտագործման յուրահատկությունը: Այսպես, ագրարային հատվածում աշխատանքի օգտագործման արդյունավետության վրա էական ազդեցություն է ունենում արտադրության սեղոնային բնույթը՝ պայմանավորված աշխատանքի ժամանակաշրջանների հետ արտադրության ժամանակների անհամապատասխանությամբ: Աշխատանքի սեղոնայնությամբ պայմանավորված՝ ագրարային հատվածում աշխատուժի զգակի պահանջարկ է առաջանում ցանքի, գյուղատնտեսական մշակաբույսերը սածիլելու, հատապտուղների ու խաղողի տնկարկները մշակելու և բերքահավաքի ժամանակաշրջանում: Միաժամանակ, ծմեռային փուլում աշխատուժի ավելացում է նկատվում բուսաբուծության ենթաճյուղերում<sup>3</sup>:

<sup>2</sup> Տե՛ս Խօճաբեկյան Յ. Սովորություն գյուղատնտեսական աշխատանքում առաջանական գործընթացների մասին. Եղանակագիր. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համար, 2003, էջ 77-78:

<sup>3</sup> Տե՛ս «Էկոնոմիկա սեղոնայնության մասին» օրենքը. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համար, 2004, էջ 144:

Անդրադառնալով տարվա ընթացքում աշխատանքային ծախսերի հավասարաչափության հարցին՝ անհրաժեշտ է մատնանշել դրանց անմիջական կապը գյուղատնտեսական աշխատանքների սեզոնայնության հետ: Դա հատկապես ակնառու է դրսևորվում ՀՀ ուղղաձիգ լանդշաֆտային և գյուղատնտեսական գոտիների ագրոկլիմայական պայմանների խիստ բազմազանության պայմաններում:

Բուսաբուծության աշխատանքների գերակշիռ մասը բաժին է ընկնում տարվա տաք ժամանակաշրջանին: Այսպես, հանրապետության հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու լեռնանտառաշային լանդշաֆտների ենթագոտու գյուղացիական տնտեսություններում ձմեռային ամիսներին խաղողագործությանը բաժին է ընկնում աշխատանքային ծախսերի միայն 16%-ը, Արարատյան դաշտում՝ մոտ 8%-ը, իսկ պտղաբուծությանը՝ համապատասխանաբար՝ 15-16%-ը և 12-13%-ը: Նման տարբերությունները բացատրվում են նրանով, որ հանրապետության հյուսիս-արևելքի համեմատաբար մեղմ ագրոկլիմայական պայմաններն ավելի բարենպաստ են ձմեռային աշխատանքների համար: Մասնավորապես, ՀՀ հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտում կատարվում են խաղողի և պտղատու այգիների աշնանավերջի և ձմեռային ռողովման, հունդավոր ու մանր կորիզավոր պտուղների էտնան, երեմճն նաև միջշարքային հողամշակման աշխատանքներ:

Հանրապետության գյուղացիական տնտեսություններում աշխատանքների կտրուկ արտահայտված սեզոնայնություն չի նկատվում անասնաբուծության ճյուղում: Ուստի ուսումնասիրելու համար ընտրել ենք հանրապետության բուսաբուծության երկու կարևոր ենթաճյուղերի՝ պտղաբուծության և խաղողագործության վերլուծությունը:

Ստորև ներկայացված են տվյալներ Արարատյան դաշտի գյուղատնտեսական գոտու, Արմավիրի տարածաշրջանի Արշալույս, Նոր Արտագերս և Արմավիր համայնքների խաղողագործական-պտղաբուծական ուղղություն ունեցող ընտրովի գյուղացիական տնտեսությունների ագրոտեխնիկական աշխատանքային ծրագրերի խմբավորված նյութերը (տես աղյուսակ 1):

### **Աղյուսակ 1** **Աշխատանքային ծախսերի բաշխումը Արմավիրի տարածաշրջանի Արշալույս, Նոր Արտագերս և Արմավիր համայնքներում՝ ըստ ամիսների (տոկոսներով, 2012 թ.)<sup>4</sup>**

Եղուղի անվանումը	Ամիսներ												
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Բուսաբուծությունը ամրոցությամբ	2.8	3.3	11.8	8.4	12.9	16.1	14.4	7.0	10.1	8.3	3.2	1.7	100
Բազմամյա տնկարկների տարածքը	3.5	5.0	16.6	15.0	12.4	11.1	13.0	2.5	8.2	5.3	7.4	-	100
աղ բվում՝ խաղողի տնկարկների տարածքը	3.2	4.4	15.2	16.1	12.4	12.3	9.8	2.3	9.7	5.7	8.9	-	100
պտղի և հատապտղի տնկարկների տարածքը	5.0	7.7	22.6	10.7	12.2	5.7	26.8	3.6	0.9	3.7	1.1	-	100

<sup>4</sup> Աղյուսակը կազմել ենք Արմավիրի տարածաշրջանի Արշալույս, Նոր Արտագերս և Արմավիր գյուղական համայնքների 200 գյուղացիական տնտեսություններում կատարված հարցման տվյալների խմբավորմամբ:

Այսուակի տվյալներից պարզվում է, որ բազմանյա տնկարկների տարածքում դեկտեմբերին ընդհանրապես աշխատանքային ծախսեր չեն կատարվում: Աշնանը և ձմռանը աշխատանքային ծախսերի դադարեցումը բնորոշ է ամբողջ բուսաբուծությանը՝ բացառությամբ բազմանյա տնկարկների տարածքների: Գարնանային ամիսներին բուսաբուծությանը բաժին ընկնող աշխատանքային ծախսերը զգալիորեն գերազանցում են աշնանային ամիսներին կատարվածին, սակայն աշխատանքային լարված ժամանակաշրջանը ամառն է: Դա հիմնականում պայմանավորված է գյուղացիական տնտեսությունների մասնագիտացմամբ. Ժիրամի բերքահավաքը և առաքում շուկաներ (հուլիս), բանջարանոցային մշակաբույսերի ինտենսիվ մշակում՝ քաղիան, փխրեցում ձեռքով (հուլիս), կերերի մթերում (հունիս-հուլիս): Իսկ նախալեռնային և լեռնային գոտիներում աշխատանքների լարված փուլը փոքր-ինչ հետաձգվում է՝ հասնելով հուլիսի կես:

Գյուղատնտեսական արտադրության մեջ, փաստորեն, անհնարին է աշխատանքի ներ մասնագիտացում: Աշխատանքների բազմազան ձևերը և դրանց կատարման սեղմ ժամկետները հանգեցնում են նրան, որ շատ աշխատողներ համատեղում են ագրարային մի շարք աշխատանքային գործառույթներ:

Բազմանյա տնկարկների տարածքում աշխատանքային ծախսերի սեղունային բաշխումը ունի հետևյալ պատկերը: Այստեղ հիմնական աշխատանքային ծախսերը կատարում են գարնանային ամիսներին՝ 44%, ամառային ամիսներին՝ 26.6%, աշնանային ամիսներին՝ 20.9%: Աշխատանքային ծախսերի մնացած՝ 8.5%-ը բաժին է ընկնում ձմեռային ամիսներին:

Խաղողագործության աշխատանքների լարված փուլն ապրիլն է, երբ իրականացվում են վազի էտման և չորկապի աշխատատար գործընթացները: Փոքր-ինչ պակաս, բայց համեմատաբար մեծ են աշխատանքային ծախսերը մարտին, երբ Արարատյան դաշտի գյուղատնտեսական գոտում իրականացվում է խաղողագործության առավել աշխատատար գործընթացներից մեկը՝ այգեբացը:

Անշանը խաղողի այգիներում աշխատանքային ծախսերը զգալիորեն կրճատվում են՝ օգոստոսին հասնելով տարեկան ծախսերի մինչև 2.3%-ի: Այնուհետև դրանք ավելանում են՝ խաղողի բերքահավաք և աշնանային այգեթաղ:

Պտղաբուծության աշխատանքային ծախսերը գարնանը նույնպես բարձր են: Այսպես՝ մարտին, այսինքն՝ հողերի և բազմանյա տնկարկների առավել ինտենսիվ մշակման ժամանակաշրջանին, բաժին է ընկնում տարեկան ծախսերի 22.6%-ը: Այդ փուլում իրականացվում են միջջարբային հողամշակում, ոռոգման բաժնակների ստեղծում, ոռոգում, սրսկում, ավարտվում է այգիների գարնանային էտը և այլն: Այնուհետև աշխատանքային ծախսերը զգալիորեն կրճատվում են, ապա աճում՝ ամենաբարձր լարվածության հասնելով հուլիսին՝ ծիրանի բերքահավաքի ժամանակ:

Կարծիք կա, որ խաղողի և պտղահատապտղային տնկարկների տարածքի բնորոշված գուգակցման դեպքում գյուղացիական տնտեսություններում բարելավվում է աշխատանքային ռեսուրսների օգտագործումը, և մեղմացվում է սեղոնայնությունը: Ուստի, որպեսզի պարզաբանենք, թե

ինչքանով է արդյունավետ հանրապետության բազմազան ագրոկլինայական պայմաններում խաղողի և պտղահատապտղային տնկարկների տարածքի այդպիսի զուգակցումը, ըստ ամիսների ներկայացնենք աշխատանքային ծախսերի բաշխումը հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու ընտրովի գյուղացիական տնտեսություններում՝ պտղաբուծության և խաղողագործության ենթաճյուղերում (տես այսուսակ 2):

#### **Այլուսակ 2**

**Աշխատանքային ծախսերի բաշխումը՝ ՀՀ հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտու Խջևանի տարածաշրջանի Այգեհովիտ, Աչածուր և Գետահովիտ գյուղական համայնքների ընտրովի գյուղացիական տնտեսություններում՝ ըստ ամիսների (տոկոսներով, 2012 թ.)<sup>5</sup>**

Ենթաճյուղի անվանումը	Ամիսներ												Ողջ տարվա ընթացքում
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Պտղաբուծություն	6.9	7.0	10.2	8.1	9.2	10.0	9.4	7.1	25.1	4.2	0.3	2.5	100
Խաղողագործություն	3.3	5.8	7.5	8.5	8.7	11.1	12.3	6.8	12.3	10.3	5.6	7.7	100
Միջինը՝ ըստ երկու ենթաճյուղերի	4.3	6.1	8.3	8.4	8.9	10.8	11.6	6.9	15.7	8.6	4.1	6.3	100

Այսուսակից երևում է, որ այս երկու ենթաճյուղերի միագունարման դեպքում որոշ ամիսների, իրոք, տեղի է ունենում աշխատանքային ծախսերի որոշակի համահարթեցում: Պտղաբուծության զուգակցումը խաղողագործությանը հնարավորություն է տալիս աշնան երկրորդ կեսին և ձմռան սկզբին առավել ռացիոնալ օգտագործելու աշխատանքային ռեսուրսները: Բացի դրանից, աշխատանքային ռեսուրսների օգտագործման որոշակի բարելավում կարելի է ապահովել նաև պտղի ու հատապտղի և խաղողի բերքահավաքների հերթագայության դեպքում: Շնորհիվ համապատասխանող սորտատեսակների ճիշտ ընտրության՝ ավելանում է խաղողի, պտղի և հատապտղուղների նմանատիպ զուգակցման օգտակար արդյունքը: Սակայն, պտղաբուծության և խաղողագործության ոլորտում, որոշ ամիսներին աշխատանքային ծախսերի միագունարումը շոշափելի արդյունք չի ապահովում: Այսպես, ապրիլի, մայիսի, հուլիսի և օգոստոսի ընթացքում պտղուղների ու հատապտղուղների և խաղողի զուգակցմանը միջին հաշվով երկու ենթաճյուղերում էապես չեն փոփոխվում աշխատան-

<sup>5</sup> Այլուսակը կազմել ենք Տավուշի մարզի Այգեհովիտ, Աչածուր և Գետահովիտ գյուղական համայնքների 200 գյուղացիական տնտեսություններում կատարված հարցման տվյալների խմբավորմամբ:

քային ծախսերը: Այդպիսի իրավիճակը պայմանավորված է պտուղների ու հատապտուղների և խաղողի ագրոտեխնիկական բնորոշված կարգով, երբ, ըստ ժամկետների, այգիներուն ագրոտեխնիկական որոշ միջոցառումների անցկացումը համընկնում է դրանց կատարմանը:

Միաժամանակ, Վերլուծությանը հաստատվում է, որ այդ ենթաճյուղներում աշխատանքների հիմնական փուլերից մեկը, որպես կանոն, բաժին է ընկնում պտուղների ու հատապտուղների և խաղողի զանգվածային բերքահավաքին: Թվում է, թե, ըստ հանրապետության գյուղացիական տնտեսությունների, առավել մեծ աշխատանքային ծախսեր պետք է բաժին ընկնեին պտուղների ու հատապտուղների և խաղողի բերքահավաքի ամիսներին: Սակայն մեր Վերլուծություններն այլ բան են ապացուցում (տե՛ս այսուսակ 3):

**Աղյուսակ 3**  
**Հանրապետության գյուղացիական տնտեսություններում մշտական և սեզոնային աշխատողների միջին ցուցակային թվաքանակը՝ ըստ ամիսների (%)-ով, 2012 թ.)<sup>6</sup>**

Գյուղատնտեսական գոտիները	Ամիսները												
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Արարատյան դաշտ	5.6	6.0	8.1	9.3	9.0	9.3	9.9	10.4	8.9	8.6	8.1	6.9	100
Արարատյան դաշտի նախալեռներ	5.4	6.0	7.3	8.7	10.0	10.4	10.8	9.8	9.3	7.5	8.2	6.6	100
Սևանի ավազան	4.7	4.6	4.9	7.1	7.2	9.6	12.0	13.9	13.4	9.3	6.3	7.0	100
Շիրակ	5.4	5.1	6.1	6.3	9.8	11.1	13.2	11.3	10.0	9.5	6.8	5.4	100
Լոռի-Փամբակ	4.6	4.3	5.4	6.4	8.0	9.7	11.7	12.1	10.9	10.0	8.5	8.4	100
Յյուսիսարևելք	5.4	5.4	6.8	7.2	8.4	10.0	11.6	11.2	10.5	9.1	8.0	6.4	100
Վայք	6.5	6.6	3.8	9.6	11.5	11.8	11.7	12.6	9.8	7.4	5.7	3.0	100
Զանգեզուր	3.4	5.3	6.7	7.9	8.9	9.5	10.3	12.2	10.6	9.4	7.8	8.0	100
Ազարան-Նրազդան (Կենտրոնական)	4.6	5.5	5.8	7.8	9.5	8.4	14.7	11.4	12.8	10.8	4.4	4.3	100

<sup>6</sup> Աղյուսակը կազմել ենք ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության բաժնի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության և անասնաբուծության բաժինների տվյալների հիման վրա:

Այսուսակի տվյալներից պարզվում է, որ այն գյուղատնտեսական գոտիներում, որտեղ գյուղացիական տնտեսություններում արտադրվում են խաղող և պտուղներ ու հատապտուղներ, աշխատանքների լարված փուլը ամառվա երկրորդ կեսն է: Այնինչ բազմամյա տնկարկների սորտատեսակային կազմի դեպքում պտուղների ու հատապտուղների և խաղողի բերքահավաքը իհմնականում իրականացվում է աշնան առաջին կեսին: Այդ անհամապատասխանությունը բացատրվում է նրանով, որ պտղաբուծական և խաղողագործական արտադրական ուղղություն ունեցող գյուղացիական տնտեսություններում աշխատանքային ծախսերի բաշխումն ըստ սեզոնների զգալիորեն փոփոխվում է այլ ենթաճյուղերի (օրինակ՝ բանջարաբուծության, վաղահաս կարտոֆիլագործության և կերարտադրության) աշխատանքային ծախսերի ազդեցությամբ: Այս դեպքում աշխատանքների լարված փուլն ավելի ընդգծված է դրսնորվում, քան ճյուղային կառուցվածքի վրա զգալիորեն ներգործող ըստ ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների ագրոկլիմայական պայմանների կտրուկ հերթափոխությունը: Օրինակ, եթե Արարատյան դաշտի գյուղատնտեսական գոտու գյուղացիական տնտեսություններում աշխատանքների լարված փուլում աշխատողների թվաքանակը 1.9 անգամ է գերազանցում հունվարին արձանագրվածը, ապա Ապարան-Յրազդանում (կենտրոնականում՝ 3.2 անգամ, Սևանի ավազանում՝ 2.9 անգամ:

Հետևաբար՝ հանրապետության գյուղացիական տնտեսություններում աշխատանքների կատարման ամենալարված ամիսներն են հուլիսը և օգոստոսը, այնուհետև՝ սեպտեմբերը և հունիսը: Բնութագրելով գյուղացիական տնտեսություններում աշխատանքային ծախսերի բաշխումը՝ պետք է նշել, որ դրանք հանրապետության ցածրադիր գոտում զգալիորեն հավասարաչափ են բաշխված, քան լեռնային գոտում: Այստեղ գյուղացիական տնտեսությունների աշխատանքների լարված փուլում 4-5 անգամ ավելի շատ աշխատողներ են ներգրավվում, քան հունվարին: Դա բացատրվում է լեռնային գոտում վեգետացիոն փուլի համեմատաբար կարծ տևողությամբ և աշխատուժի զգալի ավելցուկի առկայությամբ:

Վերլուծելով 2012 թվականի ընթացքում գյուղացիական տնտեսություններում մշտական և սեզոնային աշխատողների աշխատանքային ծախսերի ըստ ամիսների բաշխման ցուցակային թվաքանակը՝ ակնհայտ է դառնում, որ, կախված արտադրության տեխնոլոգիայից և ագրոկլիմայական պայմաններից, տարրեր ամիսներին աշխատողների օրերի զբաղվածությունը գյուղատնտեսական աշխատանքներում տարբեր է եղել: Այսպես, հանրապետության գյուղացիական տնտեսությունների լարված փուլում աշխատողների 11 %-ը տարեկան միջին հաշվով աշխատել է մոտ 12 մարդ/օր: Դա բացատրվում է նրանով, որ աշխատողների զբաղվածությունն ամռան ամիսներին աճում է: Մասնավորապես, յուրաքանչյուր աշխատող հուլիսին աշխատել է 25,1 մարդ/օր, իսկ հունվարին՝ 20,2 մարդ/օր: Պետք է հավելել նաև, որ ամռան ամիսներին է արձանագրվում սեզոնային աշխատողների ամենամեծ թվաքանակը:

Անդրադառնալով հանրապետության գյուղացիական տնտեսություններում սեզոնային աշխատողների խնդրին՝ պետք է ընդգծել, որ աշխա-

տանքային հաշվեկշռում նրանց տեսակարար կշիռը զգալի է: ճիշտ է, ըստ հանրապետության գյուղացիական տնտեսությունների՝ սեզոնային աշխատողները ոչ ամբողջությամբ են համապատասխանում իրական առաջադրված պահանջներին: Այսպես, սեզոնային աշխատողների գերակշռ մասը ներառվում է անասնաբուժական-կարտոֆիլագործական, այլ ոչ թե խաղողագործական-պտղաբուժական արտադրական ուղղությամբ գյուղացիական տնտեսություններում: Դատկապես անասնաբուժական-կարտոֆիլագործական ուղղությամբ գյուղացիական տնտեսությունների սեզոնային աշխատուժը վճարականորեն է ազդրում սեզոնային աշխատողների ընդհանուր թվաքանակի ավելացման վրա (տե՛ս աղյուսակ 4):

#### **Աղյուսակ 4**

**ՀՅ գյուղացիական տնտեսությունների աշխատողների ընդհանուր թվաքանակում սեզոնային աշխատողների միջին ցուցակային տեսակարար կշիռ՝ ըստ տարվա ամիսների (%- ով, 2012 թ.)<sup>7</sup>**

Գյուղատնտեսական գոտիները	Ամիսներ												Միջինը տարվա ընթացքում
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Արարատյան դաշտ	4,5	6,7	13,5	14,4	11,3	11,5	13,9	14,4	11,0	7,9	11,6	7,3	11,0
Արարատյան դաշտի նախալեռներ	6,1	8,2	10,4	10,5	13,8	22,8	22,0	21,2	15,5	5,9	9,7	6,9	13,6
Կենտրոնական	12,5	13,1	18,1	32,0	45,9	47,2	68,3	64,2	65,9	58,7	1,4	7,7	45,8
Սևանի ավազան	10,6	7,8	8,3	34,1	31,2	44,3	54,9	61,9	65,2	52,9	33,6	23,6	42,9
Շիրակ	3,2	7,9	11,2	20,1	34,8	40,1	46,2	42,7	44,8	31,0	19,9	13,9	31,2
Լոռի-Փամբակ	5,5	7,3	7,4	6,7	7,7	15,7	21,2	28,2	15,6	11,8	10,0	4,9	13,8
Ջյուսիս-արևելք	1,3	1,5	3,2	5,3	5,9	20,4	18,2	20,7	15,4	11,2	5,2	1,2	10,8
Վայք	10,2	8,8	15,6	31,0	36,3	35,0	44,2	42,1	34,1	29,5	21,1	7,9	30,6
Զանգեզուր	5,3	7,2	18,3	16,0	20,5	22,5	32,0	26,0	24,8	20,3	22,7	21,2	21,5
<b>Միջինը՝ ըստ ՀՅ գյուղացիական տնտեսությունների</b>	<b>5,3</b>	<b>6,4</b>	<b>10,9</b>	<b>14,2</b>	<b>15,7</b>	<b>21,7</b>	<b>25,4</b>	<b>25,9</b>	<b>22,7</b>	<b>15,8</b>	<b>11,9</b>	<b>8,6</b>	<b>16,9</b>

Աղյուսակի տվյալների վերլուծությունից պարզվում է, որ տարվա ընթացքում միջին հաշվով ամենափոքր թվով սեզոնային աշխատողներ ներգրավվել են Արարատյան դաշտի, Արարատյան դաշտի նախալեռնային և ՀՅ հյուսիսարևելյան գյուղատնտեսական գոտիների գյուղացիական տնտեսություններում՝ համապատասխանաբար աշխատողների միջին տարեկան թվաքանակի՝ 11,0%-ը, 13,6%-ը, 10,8%-ը, այսինքն՝ փոքր-ինչ ավելի պակաս, քան տարվա ընթացքում միջինն ըստ ամբողջ հանրապետու-

<sup>7</sup> Աղյուսակը կազմել ենք ՀՅ ԱՎԾ գյուղատնտեսության բաժնի և ՀՅ գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության և անասնաբուծության բաժնների տվյալների հիման վրա:

թյան: Հենց նշված գյուղատնտեսական գոտիներում է տեղաբաշխված հանրապետության խաղողագործական-պտղաբուծական և պտղաբուծական-խաղողագործական արտադրական ուղղություն ունեցող գյուղացիական տնտեսությունների մեջ մասը:

Միաժամանակ, կենտրոնական և Սևանի ավագանի գյուղատնտեսական գոտիների գյուղացիական տնտեսություններում, որտեղ տեղաբաշխված են բացառապես անասնաբուծական-կարտոֆիլագործական արտադրական ուղղություն ունեցող գյուղացիական տնտեսությունները, սեղոնային աշխատողները կազմում են միջին տարեկան թվաքանակի 43-46%-ը: Միջին հաշվով հանրապետության գյուղատնտեսական գոտիների մեջ մասուն սեղոնային աշխատողների ամենաբարձր տեսակարար կշիռը արձանագրվում է հուլիսին և օգոստոսին:

Կենտրոնական և Սևանի ավագանի գյուղատնտեսական գոտիների սեղոնային աշխատողների թվաքանակը մնացած ամիսներին կազմում է 65-68%: Այսպես, Ապարանի տարածաշրջանի Նիգավան և Երնջատափ համայնքների տավարաբուծական-ոչխարաբուծական արտադրական ուղղություն ունեցող գյուղացիական տնտեսություններում սեղոնային աշխատողների թվաքանակը հուլիսին 2,2 անգամ գերազանցել է մշտական աշխատողների թվաքանակին, իսկ օգոստոսին՝ 2 անգամ: Մարտունու տարածաշրջանի Երանոս և Չոլաքար համայնքների գյուղացիական տնտեսություններում սեղոնային աշխատողները օգոստոսին՝ 2,1, իսկ սեպտեմբերին՝ 3,3 անգամ ավելի շատ են, քան մշտական աշխատողները: Տավարաբուծական-ոչխարաբուծական և անասնաբուծական-կարտոֆիլագործական արտադրական ուղղություն ունեցող գյուղացիական տնտեսությունների սեղոնային աշխատողների այսպիսի մեջ տեսակարար կշիռը պայմանավորված է կերարտադրության, բերքահավաքի, կերերը բեռնելու, բեռնաբափելու, սիլոսացման և այլ աշխատանքային գործընթացների բույլ մեքենայացվածության մակարդակով:

Խոտերի հավաքման, սիլոսացման և այլ աշխատանքների հետագա մեքենայացումը հանգեցնելու է ձեռքի աշխատանքի ծախսերի զգալի կրճատման: Եթե լեռնային մասնատված ռելիեֆի պայմաններում դժվարացել և գրեթե անհնար է դարձել տրակտորային շարժակազմի օգտագործումը, ապա զգալի արդյունք կարող է տալ ծիախոտահնձի շարժիչների շարժունակության մեջ հնարավորություն ունեցող փոքրածավալ տեխնիկայի և այլ միջոցների արմատավորումը: Մոտավորապես նման ձևով են կազմակերպվում նաև խոտ դիզելու, մամլելու և կերապաշարման մյուս գործընթացները: Աշխատանքի լարված փուլերի հաղթահարման հնարավորությունները բավական շատ են նաև բուսաբուծության հիմնական՝ պտղաբուծության ու խաղողագործության և ծխախոտագործության ու կարտոֆիլագործության ենթաճյուղներում:

ՀՅ գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման հետագա խորացման գործընթացներում աշխատանքային ծախսերի կատարման սեղոնայնությունը կարող է հաղթահարվել միայն մեքենայացման միջոցների ամբողջական ու համակողմանի օգտագործման և աշխատանքային գործընթացների խելամիտ կազմակերպման դեպքում: Ընդ որում, նկատի

ունենք ոչ միայն արտադրության հեռանկարային համալիր մեքենայացումը, այլև առկա հնարավորությունները: Ուստի հասունացել է պտղաբուծության և խաղողագործության մեջ ձեռքի աշխատանքների մանրանասն ուսումնասիրության և դրանք մեքենայական մշակման եղանակներով փոխարինելու անհրաժեշտությունը: Այսպես, հատապտուղներ հավաքող կոճբայնների օգտագործումը թույլ է տալիս պտղաբուծության մեջ մեքենայացնել հաղարջի բերքահավաքը՝ փոխարինելով 300-350 հավաքողների աշխատանքին: Ագրարային հատվածում աշխատուժի օգտագործման սեզոնայնության մեղմացման կարելի է հասնել նաև հասունացման տարբեր ժամկետներ ունեցող գյուղատնտեսական մշակաբույսերի սորտատեսակային կազմի ճիշտ գուգակցմանը (օրինակ՝ վաղահաս, միջահաս և ուշահաս բանջարաբուտանային մշակաբույսերի օգտագործումը հնարավորություն է տալիս ցանքի, սածիլելու և բերքահավաքի գործընթացներում ավելի հավասարաչափ օգտագործել աշխատուժը):

Բացի այդ, անհրաժեշտ է անմիջապես արտադրության վայրում կազմակերպել գյուղատնտեսական մթերքների վերանշակում և երկարատև պահեստավորում, այսինքն՝ ագրոարտադրական ինտեգրացումը զարգացնել (խաղողագործական և պտղաբուծական ուղղություն ունեցող գյուղական համայնքներում, որտեղ առկա են պտուղների ու խաղողի պահեստարաններ, բերքահավաքի փուլում աշխատուժի պահանջարկը կրծատվում է 1,5-2 անգամ, իսկ ուշ աշնանային և ձմեռային փուլերում զգալիուն աճում է):

Հետևաբար, եթե ներկայում առկա մեքենայացման միջոցներով կարելի է բազմայա տնկարկների տարածքի վրա ձեռքի աշխատանքը հասցնել նվազագույնի, և համապատասխան մեքենաների ու գործիքների ընտրությամբ զգալիորեն հաղթահարել տարվա ընթացքում ձեռքի աշխատանքի ծախսերի սեզոնային տատանումները, ապա գյուղացիական տնտեսությունների մշտական աշխատողների վիճակի բարելավում՝ կապված բերքահավաքի դժվարությունների հաղթահարման հետ, դեռևս չի ակնկալվում: Այդ համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսական մթերքների արտադրությանը և իրացմանը նպաստող համապատասխան մեքենաների ու սարքավորումների և տրանսպորտային միջոցների ու ցանցի կատարելագործման գործընթացը: Ագրարային հատվածի աշխատատար ենթաճյուղերի մեքենայացման հետ մեկտեղ՝ անհրաժեշտ են համապատասխան պարարտանյութեր և թունաքիմիկատներ, ինչպես նաև բազմաբնույթ ռիսկերի առաջացման դեմ պայքար, ոռոգման համակարգի կատարելագործում և այլն:

**ВОЛОДЯ МАНАСЯН – Отношение специализации аграрного сектора к распределению трудовых затрат в связи с сезонностью сельскохозяйственных работ.** – В статье подробно анализируются трудовые затраты в основных отраслях сельскохозяйственного производства и размещение трудовых ресурсов, обусловленное сезонностью работ. Последняя объясняется, в частности, разнообразием агроклиматических ресурсов в различных ландшафтных поясах Армении. Установлено, что в садоводстве и животноводстве (вместе с кормодобыванием) рас-

ходится около 85% общих трудовых затрат, а на возделывание пропашных и других культур – немногим более 15%. Следовательно, крестьянские хозяйства специализируются на производстве винограда, плодов и продукции животноводства. Однако это не говорит о такой же четкой внутрихозяйственной специализации, так как в большинстве хозяйств имеются почти все перечисленные отрасли, что зачастую не оправдывается с социально-экономической точки зрения.

**VOLODYA MANASYAN – *Relation of Specialization of Agrarian Sector to Distribution of Labour Costs in Connection with Seasonality of Agricultural Work.*** – The labour costs in general subindustries of agricultural production and issues on distribution of labour resource in connection with seasonality of agricultural work are scrutinized in the article.

It is especially strongly displayed on conditions of big variety of agro-climatic resources of different high-rise landscape zones of the Republic of Armenia. Based on this structure of labour costs of the republic, it is fixed that about 85% of total labour costs and for particular ones more than 15% is expended in horticulture and animal husbandry (together with forage) for cultivation of cultivated crops and other planting. This indicates that farms are specialized in production of grapes, fruits and production of animal husbandry. However, it doesn't mean that also intraeconomic specialization is as legible, as majority of them has nearly all specified subindustries, which is not often justified from social-economic viewpoint.